ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 0 2

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում 2017թ. հոկտեմբերի 27-ին ժամը 14:00-ի կայացած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետ***
Մ.Աբգարյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Ն. Մովսիսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Հր. Գևորգյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար***

Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օրակարգ

1. Մարզի համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Ավետիսյան/:
2. <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում կատարված և կատարվելիք ընդհանուր աշխատանքների մասին /զեկ. մարզպետի տեղակալ Մ. Աբգարյան/:
3. Աշնանային գյուղատնտեսական աշխատանների և ինտենսիվ այգիների հիմնման ծրագրերի մասին/զեկ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու. Ազատյան/:
4. Համայնքների բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը (զեկուցող. ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ՝ Ս. Հովսեփյան):
5. Հայտարարություններ այլ հարցեր (Ի. Բարսեղյան, Ա. Հակոբյան):

1.Մարզի համայնքների բյուջեների կատարման եւ սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին զեկուցեց մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Ավետիսյանը: Նա տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքները կատարվել են 63,5%-ով: Ներկայացրեց այն համայնքների ցանկը, որոնք այդ աշխատանքներում չեն կարողացել հաղթահարել 50%-ի շեմը: Առաջարկվեց համայնքի ղեկավարներին մինչև տարեվերջ տեղական տուրքերի վճարման մասով թերացումները շտկել: Խոսվեց ֆոնդային և վարչական բյուջեների, դրանց նպատակային ճիշտ ծախսերի մասին: **Այդ կապակցությամբ մարզպետը առաջարկեց ցածր ցուցանիշ ունեցող համայնքների ղեկավարներին՝**

Միջոցներ ձեռնարկել մինչև տարեվերջ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները բարձրացնելու ուղղությամբ:

2. Մարզպետի տեղակալ Մուշեղ Աբգարյանը խոսեց ,, Մաքուր Հայաստան,, ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքների մասին: Նշվեց, որ մարզպետի

կագրադրությամբ ստեղծված է հանձնաժողով, որը համակարգում է համայնքներում, մարզային եւ պետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում իրականացվող մաքրման աշխատանքները: Մարզում կազմակերպվել է 1 մարզային եւ 3 համապետական շաբաթօրյակ, որոնց դրական արդյունքն ակնհայտ է: Խոսվեց Աղձք համայնքի և Ծաղկահովիտի տարածաշրջանում աղբահանության խնդիրների և դրանց լուծմանն ուղղված աշխատանքների մասին: Ուսումնասիրման ընթացքում բացահայտված 136 աղբավայրից 124-ը այժմ փակված է:

Մարզպետի տեղակալը ներկայացրեց ստեղծված նոր տեղեկատվական վիրտուալ համակարգի մասին, որը հնարավորություն կտա յուրաքանչյուր քաղաքացու մուտք գործել և տեղեկացնել որևէ վայրում աղբահանության կանոնների խախտման մասին: Ահազանգի հետքերով մարզային պատասխանատուները հնարավորություն կունենան արագ շտկելու և կարգավորելու խնդիրը:

3.Ներկաները տեղեկացան նաև գյուղատնտեսական ոլորտում իրականացված աշխատանքների եւ ծրագրի մասին, բերքահավաքի աշխատանքների ցածր ցուցանիշների մասին. օպերատիվ տվյալներով հավաքվել է շուրջ 145000 հազար տոննա խոտ, 65000 տոննա պտուղ եւ հատապտուղ, հնձվել է շուրջ 22000 հա հացահատիկ, միջին բերքը կազմել է 15-17 ց: Ցածր բերքատվության պատճառը Թալինի տարածաշրջանում երաշտն ու կարկտահարություններն են, որոնք վնաս են պատճառել նաեւ գյուղացիական տնտեսությունների բազմամյա տնկարկներին ու գյուղատնտեսական մշակաբույսերին: Բանջարաբոստանային, կարտոֆիլի ցանքատարածությունների,աշնանացանի առկա սերմացուների մասին տեղեկատվություն ներկայացնելուց նշվեց նաև, որ շատ դեպքերում համայնքի ղեկավարները չեն տիրապետում և սխալ տեղեկատվություն են ներկայացնում: Անդրադարձ եղավ նաեւ նոր ինտենսիվ այգիների հիմնան, հակակարկտային ցանցերի, ոռոգման կաթիլային եղանակի ներդրման, սերմացուների, ազոտական պարարտանյութի եւ դիզվառելիքի հատկացման խնդիրներին եւ դրանց արդյունավետ իրականացմանը /Յու. Ազատյան/:

4.Խոսվեց տեղական ինքնակառավարմանը համայնքների բնակչության մասնակցության դերի բարձրացման մասին, որոնք առաջանալու են այս ոլորտում համայնքների խոշորացումից հետո: Մեկ անգամ ևս կարևորվեց մինչև խոշորացումը վարչական և ֆոնդային բյուջեների ծախսերի ժամանակ առաջնորդվել բացառապես ՀՀ օրենսդրությամբ / Ս. Հովսեփյանը/:

5. Նիստի ավարտին մարզում համայնքների կողմից ներդրումային ծրագրերի աջակցմանն ուղղված խորհրդատվական ելույթում հնչեցին յուրաքանչյուր ծրագրին մեթոդական և բովանդակային օգնություն ցուցաբերելու մարզպետարանի պատրաստակամության մասին: Խոսվեց այն ոլորտների մասին, որոնցով հնարավոր է նոր ծրագրերի միջոցով զարգացում ապահովել համայնքներում:Նշվեց նաև, որ մարզպետարանը այս հարցում կարող է միջնորդ հանդիսանալ միջազգային կազմակերպություններից ֆինանսական ներդրումներ ապահովելու գործում, եթե ծրագրերը ճիշտ և նպատակային կազմվեն /Ի. Բարսեղյան/ :

Մարզխորհրդի նիստին հնչեցին նաև հարցեր, որոնց տրվեցին պատասխաններ եւ պարզաբանումներ:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ ***Ա. Սիմոնյան***